

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ռուս-ճապոնական պատերազմը:—Ռուսաց արտաքին գործոց մինիստրութեան
շրջաբերականը:—Ջաւայի եւ Արխիմիայի հայ գաղութները:

Ձատկից յետոյ ռուս-ճապոնական պատերազմի թէ ցամաքային և թէ ծովային բեմի վրայ շատ նշանաւոր անցքեր տեղի ունեցան:

Հիւսիսային Կորէայում գեներալ Կուրոկիի զօրաբանակի առաջապահ գնդերը Ձոնշուին տիրելուց յետոյ հասան Նալու գետին: Մարտի 22-ին ճապոնացիները տիրեցին Ըչժիւին և Նոնամպօին: Ռուսաց առաջապահ գնդերը նահանջեցին և անցընելով Նալու գետի մանջուրական ափը՝ ամրացրին իրանց գերաւած դիրքերը: Գեներալ Կուրոկի եռանդով պատրաստուեւ էր շարժական կամուրջներ գցել Նալու գետի վրայով, իսկ ծովակալ Հոսօի նոյն գետի բերանում իր փոքր նաւախմբով նոյն նպատակին էր ծառայում: Ամեն օր երկու կողմերի առաջապահ խմբերի մէջ ընդհարումներ էին տեղի ունենում:

Ապրիլի 10-ին սկսեց Նալու գետն անցնել գեներալ Կուրոկիի զօրաբանակը: Կամուրջները ձգելու պատրաստութիւնները հնարաւոր դարձնելու նպատակով ճապոնական գլխաւորայի և երկրորդ զօրաբաժնի (դիւլիդիա) *) ժասերը ապրիլի 13-ին յարձակուեցին ռուսների վրայ, որոնք կանգնած էին Նալու գետի կղզիների վրայ: Ճապոնացիները յետ մղեցին ռուսներին և գրաւեցին կղզիները: Նոյն օրը երկու մարտանաւ և երկու շոգենաւ Նալու գետով վեր ըսրձրացան և սկսեցին թնդանօթաձգութիւն թշնամու հետ: Ապրիլի 16-ին երեկոյեան ժամի 8-ին պատրաստ էր գետի գլխաւոր բազուկի վրայի կամուրջը, և զօրաբանակն անցկացաւ նրա վրայով դէպի Կուշուին: Արդէն

*) Զօրաբանակը (армия) բաժանուեւ է մի քանի գումարտակների (корпусъ), իսկ գումարտակը՝ զօրաբաժինների (дивизія), զօրաբաժինը ջոկատների (бригада), ջոկատը՝ գնդերի (полкъ), գունդը, վաշտերի (батальонъ), վաշտը՝ դասակների (роты=250 մարդ պատկերազմի ժամ.):

առաւօտեան ապրիլի 17-ին, ճապոնացիները սկսեցին նեղել գէներալ Կաշտալիսկու զօրաբաժինը Տիրէնչէնի մօտ: Ապրիլի 18-ին տեղի ունեցաւ առաջին ահեղ ճակատամարտը ցամաքի վրայ: Ծապոնացիները յարձակուեցին Այխէ գետն անցնելով և իրանց արտիլերիայի և ոյժերի գերազանցութեան շնորհիւ կոտորեցին ռուսաց ձախ թևը, որ նահանջեց թողնելով ճապոնացիներին ձեռքում մի քանի թնդանօթներ: Ինչպէս յայտնում է գէներալ Կուրօպատկին, մարդկանց և ձիերի մեծ կորուստը թոյլ չտուեց հանել թնդանօթները կռուից դուրս: Ռուսները քաջ ընդդիմադրութիւն ցոյց տալուց յետոյ նահանջեցին դէպի Ֆընիստանչէն: Երկու կողմերից էլ կորուստները մեծ էին: Դիակները Զասուլիչը հեռագրում է որ ռուսների կորուստներն են—մօտ 2000 զինուոր և մօտ 40 օֆիցեր և աւելի քան 700 վիրաւորներ:

Ծովային բեմի վրայ էլ թէ Դեղին ծովի ջրերում և թէ մասամբ Ճապոնական ծովում տեղի ունեցան նշանաւոր ընդհարումներ: Ծովակալ Տոգօն մարտի 29-ից մինչև ապրիլի 2 մի շարք յարձակումներ գործեց Պորտ-Արտուրի վրայ: Մարտի 29-ից 30-ը կէս գիշերին ճապոնական ականանաւերը անսկասելի կերպով մօտեցան Պորտ-Արտուրի նաւահանգիստի դրսի մասին և զանազան տեղերում ականներ դնելով հեռացան: Ռուսաց ականանաւերը այդ օրը գնացել էին խուզարկութիւնների. ականանաւերից մի քանիսը դեռ չէին վերադարձել. լուսաբացին այդ վերադարձող ականանաւերից Страшный-ը նկատուում է ճապոնացիներից, շրջապատուում և կործանուում: Նրան օգնութեան է գնում Баянъ յաժանաւը, որ հանդիպում է ճապոնական կոնտր-ադմիրալ Դևի նաւախմբին, բաղկացած 2 զրահակիրներից և 5 մեծ զրահամած յաժանաւերից: Баянъ-ը ստիպուած էր յետ նահանջել, զարգացնելով իր ամբողջ արագընթացութիւնը (22 հանգոյց): Ծովակալ Մակարովը Петропавловскъ զրահակրի վրայ, զրահակիրների, յաժանաւերի և ականանաւերի խմբով շտապում է Страшный ականանաւի խորտակման տեղը. ճապոնական նաւախումբը կամաց-կամաց յետ է քաշում և այդպիսով հեռու գրաւում ռուսաց նաւատորմը: Հեռանալով մօտ 15 մղոն Պորտ Արտուրից Մակարովը նկատում է հեռում ծովակալ Տոգօի նաւատորմի մնացած մասը, որ աճապարում էր յարձակուելու ռուսաց նաւատորմի վրայ: Մակարովը ըմբռնելով իր հակառակորդի ծրագիրը իսկոյն հրամայում է յետ նահանջել դէպի Պորտ-Արտուր: Այդտեղ նաւահանգստում Петропавловскъ-ը ընկնում է ճապոնական ականի վրայ և սարսափելի պայթիւնից յետոյ 2 րոպէում խորտակում

ու ջրասույզ լինում, իր հետ տանելով ալիքների տակ հոչակաւոր ծովակալին իր շտաբի և զրահակրի մարդկանց մեծ մասով: Զոհւում է և հոչակաւոր ոռւս նկարիչ Վերեջագին: Մարտի 31-ի աղետալի կորուստը ցնցեց ամբողջ աշխարհը: Նոյն և յաջորդօրերը Տոգոն ուժեղեցեց Պորտ Արտուրը:

Իր մահից մի քանի օր առաջ Մակարովը փոխել էր ոռւսաց Վլադիվոստոկեան էսկադրայի հրամանատարին, փոխ ծովակալ նշանակելով Եսսէնին՝ կապիտան Բէյցենշտէյնի փոխարէն: Եսսէնը հէնց սկզբից ցոյց տուեց եռանդուն զործունէութիւն: Ճապոնական ծովի ջրերում, ուր շրջում էր Կամեմուրայի նաւախումբը՝ Կամեմուրայի անհոգութիւնից օգտուեց Եսսէնը և Գինզանի մօտ խորտակեց ճապոնական երկու աւաւորական նաւ և մի մեծ փոխադրանաւ: Ահա կոնտր-ադմիրալ Եսսէնի հեռագիրը ապրիլի 12-ից. «Գինզանում ապրելի 12-ին մեր երկու ականանաւերը պայթեցրին ճապոնական «Գոյոմարու» շոգենաւը, 500 տոնն պարունակութիւն լունեցող, նախօրօք ցամաք իջեցնելով նրա վրայ եղած բոլոր մարդկանց: Նոյն օրը, երեկոյեան ժամի 8-ին մօտ, պայթեցրուած էր ծովում ճապոնական «Նականուրամարու» շոգենաւը, մօտ 220 տոնն, որոնց վրայ եղած մարդկանց վերցրի ինձ մօտ: Գիշերը ժամի 1-ից 30 ըոպէ անց պայթեցրուած է նաև ճապոնական պատերազմական փոխադրանաւ «Կինշիումարու» 4000 տոնն պարունակութեամբ, բրնձի ծանրուցքով, այլ ռազմական պաշարով և մօտ 1500 տոնն շաժուխով: Փոխադրանաւը զինուած է 4 հատ Գոչկիսի 47 միլլիմետրանոց թնդանօթներով: Անձնատուր եղած 17 սպայ, 20 զինուոր, 85 կուլի և 65 նաւաստիներ վերցրի ինձ մօտ: Առանց սպաների մնացած զինուորները միւս մասը ոչ միայն կտրական կերպով հրաժարուեց անձնատուր լինելու և մեր յաժանաւը անցնելու, այլև զինուած ընդիմադրութիւնն ցոյց տուեց, ուստի և ջրասուզեցի փոխադրանաւի հետ»:

Ապրիլի 20-ին գիշերը ճապոնացիները դարձեալ փորձեցին Պորտ-Արտուրի նաւահանգստի մուտքը փակելու այս անգամ 8 բրանդերներով, սակայն անաջող:

Պատերազմի արհաւիրքները մտածել են տալիս խաղաղութեան կողմնակիցներին մի հնար գտնել վերջ դնելու համար այս սոսկալի մենամարտին: Մակայն կոռուզներն առայժմ համակրանքով չեն վերաբերում միջամտութեան. այդպէս ոռւսաց կառավարութիւնը ապրիլի 14-ից ուղղեց ոռւսաց ներկայացուցիչներին արտասահմանում հետեւել շրջաբերականը.

«Օտարազգի մամուլը վերջին ժամանակներս յամառու-

Թեամբ տարածում է լուրեր այն դիտաւորութիւնների մասին, որոնք ծագել են Լրոպական մի քանի կառավարութիւնների մէջ՝ ցոյց տալ խաղաղ միջնորդութիւն՝ ռուս-ճապոնական ընդհարման շուտափոյթ աւարտման համար։ Ստացուած հեռագիրները հաղորդում են նոյնիսկ, իբր այդ մտքով արդէն առաջարկութիւններ են արուած Կայսերական կառավարութեան։ Դուք լրագործում էք ամենակտրուկ կերպով հերքելու այդ լուրը։ Ռուսաստանը չէ ուզում պատերազմ. նա արել էր, հնարաւորութեան սահմաններում, ամեն բան, որպէսզի խաղաղ ճանապարհով լուծուեն Հեռաւոր-Արեւելքում ծագած բարդութիւնները, բայց ճապոնիայի դաւադրական յարձակումից յետոյ, որ ստիպեց Ռուսաստանին զէնքի դիմել, ակնյայտ է, որ ոչ մի խաղաղ միջնորդութիւն չէ կարող աջակցութիւն ունենալ։ Նոյնպէս Կայսերական կառավարութիւնը թոյլ չի տայ որեւէ պետութեան միջամտութիւնը անմիջական բանակցութիւններում։ Ռուսաստանի և ճապոնիայի մէջ պատերազմական գործողութիւնների վերջանալուց յետոյ խաղաղութեան պայմանները որոշելու համար։ Վերոգրեալը հաղորդում է ձեզ ի գիտութիւն և ի հրահանգ։

Նշանաւոր է և՛ այն որ հրամայուած է կազմել Խաղաղ Ովկիանոսի երկրորդ էսկադրա, որ յունիսի 15-ին պէտք է ուղևորուի պատերազմի բեմը։

Այդպէս ուրեմն միջամտութեան բոլորն չի հասել, և մեր առաջ են դեռևս աւելի սարսափելի արիւնհեղութիւններ։

Լ. Ս.

Ապր. 21.

—Արիսիւնիայի Ադիս-Աբաբ քաղաքից «Մշակ»-ին գրում են. «Տեղւոյս հայ գաղթականաց թիւն օրըստօրէ ստուարանալու վրայ է. մեր նախորդ յօդուածով կը գրէինք թէ հայերը 54 հոգի են հոս, այժմ այդ թիւը բարձրացած է մի քանի ամսուան ընթացքին մէջ 85-ի։ Եթէ այսպէս արագօրէն շարունակուի այս ստուարացումը, ինչ որ յուսալի է, մօտաւոր ապագայի մը մէջ բաւական կարևոր գաղթականութիւն մը պիտի ունենանք Հապեշիստանի մէջ։

Ինքնաբերաբար եկող նոր գաղթականներ գրեթէ բնաւ չի կան. եկողները առհասարակ մօտաւոր ազգականներն են հոս գտնուող գաղթականներուն, որոց հրաւիրանօք եկած են։ Ուրախ ենք, որ այժմ մեր փոքրածիւ հայ գաղութի մէջ զարգացեալ գէթ փոքր դասակարգ մը ունինք և յուսալից ենք, որ